

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мпакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄԵՐ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԵՆՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատուաստման միջոցով.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասեան գերագահական ցուցահանդէսի առիթով. Ռուսաց թատրոն. Նամակ Լազարեանի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք իմ հրաժարականի առիթով:

ՊԱՏՈՒՄՏՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մեր երկրի զանազան մասերից մենք ստանում ենք ողբերգական նկարագրութիւններ այն ծանր դրութեան մասին, որի մէջ գտնվում են այն գիւղերը, որտեղ երեւացել են տնային կենդանիների վրա ժանտախտ: Հէջը որ գիւղում եւրեւում է ժանտախտ, տեղական անամաբայօրէքները պատուիրում են, որ հիւանդ կենդանիները կողիացվեն, իսկ միւսներն էլ չուղարկվեն դաշտեր եւ արօտներ: Այդ կարգադրութեան պատճառով գիւղացիները հողը մնում է անմշակ եւ ամբողջ գիւղերը զրկվում են կարողութիւնից՝ պատրաստել հացի պաշարներ հետեւեալ ձմեռվայ համար:

Վարչութեան կարգադրութիւնը շատ խիստ է և անդրդուելի: Իւրեւացիների ֆեւսները չափազանց մեծ են և եկանալ. Սակայն գիտութիւնը եւ ուրիշ ազգերի ունեցած փորձը մինչեւ այժմ ուրիշ միջոց չեն գտել մաքառելու ժանտախտի տարածման դէմ, քան կղզիացնելով հիւանդ կենդանիներին եւ արգելելով նրանց հաղորդակցութիւնը առողջ տեղերի կենդանիների հետ: Պետութիւնը անկարող լինելով օգնութեան դալ առանձին գիւղերին, արգարացնում է իր կարգադրութիւնները նրանով, որ նա փրկում է միւս գիւղերը, առողջ դրութեան մէջ գտնվող նախիրները վարակումից եւ այդպիսով սահմանափակում է չարիքի մեծութիւնը եւ ծաւալը:

Միայն վերջին ժամանակները սկսեցին փորձ անել բժշկելու ժանտախտով հիւանդ կենդանիներին պատուաստման միջոցով: Ինչպէս որ ծաղիկի, ջրվարկութեան,

գիֆտերիտի, սիբիրական ախտի եւ ուրիշ մի քանի հիւանդութիւնների առաջն առնվում է ներկայումս պատուաստման շիջուկի միջոցով, այնպէս էլ այժմ փորձեր են անում բժշկել ժանտախտով հիւանդ կենդանիներին: Այդ փորձերը աջող հիւանդներ են տուել հարաւային Աֆրիկայում, որտեղ նրանք կատարվում էին հոգակաւոր Կոխի հսկողութեան տակ: Նրանք աջող են եղել եւ Ռուսաստանում: Այդպիսի փորձեր արված են Անդրկովկասում, Գոռու գաւառում եւ Սիբիրում:

Այժմ առաջ ունենալով պատուաստման տուած բարեկազմ արդիւնքները, կառավարութիւնը որոշել է այդ փորձերը անել լուրջ կազմակերպութեամբ եւ մեծ ծաւալով: Այդ նպատակի համար այժմ յարմարեցվում է Գանակի քաղաքի մօտ գտնվող Զուռնարադ կոչված տեղի արբունական դաստակերտը, որտեղ կան պատրաստ շինութիւններ մնացած նախկին հիւանդանոցից:

Ծանկալի է, որ այդ փորձերը շուտով կազմակերպվեն եւ կարողանալին տալ մեր ձեռքը մի հաստատ միջոց մաքառելու հիւանդութեան դէմ, առանց խանգարելու գիւղական տնտեսութեան կանոնաւոր ընթացքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՍՏՆԵՍԱԿԱՆ ԾՈՒՑԱՆ
ՀԱՆԴԵՍԻ ԱՌԻԹՈՎ
(Նամակ Երևանից)

Առաջիկայ օգոստոս ամսի 20-ին Թիֆլիսում բացվելու է Կովկասեան գերագահական ցուցահանդէս: Գիւղերի առիթ: Այդպիսի առիթ 10—20 տարին հազիւ մէկ անգամ է ներկայանում: Ցուցահանդէսը այն կենդանի պատկերներն է, որը ի ցոյց է դնում մի որոշ շրջանի կամ մի երկրի արդիւնաբերութիւնը, աշխատանքի պտուղը, ինքիւս աւրեստների արդիւնքը, մի խօսքով այն բոլորը, ինչ պէտք է գալիս առօրեայ կեանքի մէջ, կեանքի բոլոր պարագաներում: Մարդկանց չիւումը, մշտնջերի փոխանակութիւնը, արդիւնքների, գործիքների, մշակման եւ արհեստների ուսուցում:

Իսկական խօսքերը իսկոյն լրագրութեան նիւթ են դառնում: 1896 թւին Վեհափառ Կաթողիկոսի հրամանով Պետերբուրգ գնացի մի կարեւոր խնդրի առիթով բանակցութիւն սկսելու պաշտօնական անձանց հետ: Իրեւ Նորին Սրբութեան ներկայացուցիչ՝ եւ պարտական էին խնդրի նկատմամբ եղած բոլոր առարկութիւնները, բոլոր խօսակցութիւնները իսկութեամբ ծանուցանել.—եւ այդպէս էլ արեցին: Նոյն թւին ապրիլի 9-ից մտնելով պաշտօնական բանակցութիւնների մէջ՝ ամսի 13-ին գրեցին Նորին Օծութեանը բոլոր խօսածներն եւ լսածներն: Արդեւ ինքն ըստ իրենց հասկանալի էր, որ այսպիսի մի զեկուցումն գաղափար մշակու բնաւորութիւն ունի. սակայն «Արարած» իմ խմբագրութիւնը չտապել էր հէջն նոյն ամսի համարում հրատարակել իմ յայտարարութեան մի կէտը, որը, ըստ երեւոյթին, ամսագրի խմբագրութիւնը հրճեցնելով ընդունել էր բանակցողի անաշուղտութեան ապացոյց, որին կարծէք թէ անհամբեր սպասողներ կային: Նկատելով այդպիսի վարմունքը եւ ուղղութիւնը, վճռեցի վերադառնալ իմ տեղը, քանի որ աննպատակ էր այնուհետեւ խօսք չարժանակել մի խնդրի մասին, երբ իմ Մայրաքաղաք իշխանութեան պաշտօնական ամսագիրը լսածս եւ հաղորդածս արդէն հրատարակել էր իբրեւ կատարելի իրողութիւն: «Արարած» այդ վարմունքի դէմ կարեւոր համարեցի իմ անբաւարարութիւնը յայտնել Նորին Սրբութեան հետեւեալ առիթով: Առ ամենայն իշխանութիւնս եւ հաստատութիւնս խնամով պահեալ լինի սովորութիւն զգուշութեան, ըստ պա-

տրութիւնը այնպիսի կրթիչ եւ գործնական նշանակութիւն է ստանում, որ շատ խելացի, նպատակաւոր մարդ եւ ժամանակակից կատարելագործութիւնները մտնում, տարածվում են ժողովրդի մէջ, նրա բոլոր խաւերում: Ահա այսպիսի մեծ նպատակների հետ են կապված այն ահազին ջանքերը եւ նիւթական զոհողութիւնները, որոնք չեն խնայվում իւրաքանչիւր ցուցահանդէս կազմելու:

Իւրաքանչիւր ցուցահանդէսի աջողութիւնը կախված է նրա ցոյց բերած արդիւնքների, իրերի քանակութիւնից, մասնակցող մարդկանց թւից: Կովկասեան ցուցահանդէսը, կոչվելով գերագահական, նրա աջողութիւնը կախված է այն բանից, թէ ինչ չափով մեր երկրագործ դասը կը հետաքրքրվի եւ կը մասնակցի ցուցահանդէսին: Ինքն ցուցահանդէսի վարչութիւնն էլ պէտք է ամեն միջոց ձեռք առնէ, որ ցուցահանդէսի գաղափարը որքան կարելի է շատ տարածվի ժողովրդի մէջ, ազգաբնակչութիւնը հետաքրքրվի այդ բանով: Այդ հնարաւոր է նախ՝ գործակալների եւ ապա մասուլի, տպագրութեան միջոցով: Որքան մենք գիտենք ոչ մէկը եւ ոչ միւսը այն չափով ուշադրութեան չեն առնվել, որչափ հարկաւոր էր: Պարբերական մամուլը շատ քիչ բան տուեց, այն էլ հատուկ կտոր թուցիկի ակնարկների ձեւով: Ցուցահանդէսի վարչութիւնը առանձին հրատարակութիւններ չը տուեց մինչեւ այսօր, բացի ցուցահանդէսի պրօգրամից, այն էլ միմայիս ուսուցիչ լեզուով: Կովկասի երկրագործ դասը բաղկացած է հայերից, թուրքերից, վրացիներից եւ այլ տարրերից, հետեւապէս այդ պրօգրամը օր չափով կը տարածվի ժողովրդի մէջ, երբ նա ուսուցիչ կարգաւ չը դնէ. ցուցահանդէսի շարժը եւ նրա նպատակը պահանջում էր, որ տեղական ինքուհեւրով հրատարակվէին թէ պրօգրամը եւ թէ այլ բրօշուրներ ցուցահանդէսի առիթով:

Ցուցահանդէսի վարչութիւնը չունի գործակալներ գոնէ մեր՝ Երևանի շրջանում, որքան մենք գիտենք, որովհետեւ այստեղի մի երկու կաշիգործներ, որոնք ուղևում էին իրանց պատրաստած կաշիների նմուշները ցուցահանդէս ուղարկել, պրօգրամին առած՝ սրան նրան էին դիմում, խնդրելով կարգաւ եւ թարգմանել ցուցահանդէսին մասնակցելու պայմանները եւ ցոյց տալ թէ ինչ ճանապարհով պէտք է դիմել:

Հանձման օգտի եւ շահուց իւրեանց, զբանակցութիւնս պաշտօնական կամ ամենեւին չը հանել ի լուր հասարակութեան, կամ սպասել վախճանական ելից խնդրին. մինչդեռ յայտնի և առուստ վստակիւր զարմացմամբ ընթերցալ «Արարած»-ում զայստեսի առաջ... Առաջերոյս ի Ձէնը պարտ ի վերայ կայր ծանուցանել Ձերում Օծութեան զմէն մի խօսս այս կամ այն բարձրաստիճան անձին, ի տալ գիտել զհայեացս, զկարծիս եւ զգիտաւորութիւնս նոցա. եւ ես կատարելով զայդ իմ պարտաւորութիւն՝ հի իսկ զմտաւ ածել կալէի, թէ առանձնաբար հաղորդեալն յինն բանք... յէջս «Արարած»-այ իսկոյն հրատարակելոց են իբրեւ զեկուցումն զգոյցաբալ վրձնոյ, յակներեւ վրձնս գործոյս: Ըստ որում ոչ ներեմ ինձ ասել, թէ հրատարակութիւնը այդ լեալ է ի չգիտելոյ ուրուք զսահմանս եւ զկալանս պաշտօնական գաղափարաւորութեան, ուստի ենթադրեալ զայլ չարժաոյթս ոչ բնաւ պատշաճս բնաւորութեան, հանգամանաց եւ օգտի փափկազոյն խնդրոյս՝ մնայ ինձ ձեռնութալ ինչի ի գործոյս եւ աճապարել ի տեղի իմս:

Այս վերջին յայտարարութիւնս էլ կաթողիկոսական զիւանի գրագրի թէ զիւանապետի հաճութեամբ օրինակվեց բազմաթիւ պատճէններով եւ ուղարկվեց զանազան քաղաքներ: Այժմ էլ, ինչպէս տեսանք վերեւում, հրաժարար յայտարարութեանս խօսքերն են իսկոյն լրագրութեանս տրվել նոյն զիւանի վարիչների հաճութեամբ: Ինչպէս արդեօք պէտք էր բաւարարել զիւանի վարիչների այս կերպ վարմունքը:

եւ ապառնք ուղարկել ցուցահանդէս: Մինչդեռ յատուկ գործակալները, չըլելով ժողովրդի մէջ, պէտք է տային ժողովրդին ամեն մի դիւրութիւն: Մեր կարծիքով դեռ ժամանակ կայ մի երկու պակասութիւնները չակելու, եթէ ուղևում ենք, որ ցուցահանդէսի գաղափարը մեծ չափով տարածվի:

Ա.—Դ.

ՌՈՒՄԱՑ ԹԱՏՐՈՆ

Պրավդինի դերասանական խումբը երեքշաբթի, յունիսի 12-ին, ներկայացրեց իշխան Սումբատովի «Ջենտլմեն» պիեսը, որի մէջ զուրս են բերված ժամանակակից բուրժուա հասարակութեան մէջ գործողների տիպեր:

Ձեր առաջ հանդէս են բերված առանց հատուտ համոզմունքների, առանց իդէալների մարդիկ, որոնք ուղևում են ներս մտնել մասուլի եւ գրական աշխարհի մէջ: Ներանց համար մասուլը միայն մի զէնք է, մի գործիք է ազդեցութիւն ձեռք բերելու, հոգակ վայելելու, կեղտոտ նպատակներ առաջ տանելու եւ վերջապէս փող աշխատելու: Նրանք պատրաստ են ամեն տեսակ կերպարանափոխութիւններ անել իրանց հայեացքների մէջ՝ միայն թէ կարողանան աջողութիւն ունենալ, մուշտարիներ չատացնել եւ ցանցեր զցել հասարակութեան զանազան խաւերում:

Պիեսը պատում է հարուստ, սահմանափակ ուղեղի տէր, երիտասարդ Բիդլովի (Պաշարին) շուրջը: Նա վճռել է խմբագիր դառնալ եւ իր ծանօթներից կազմել խմբագրութիւն: Բիդլով պատվել է բնագիտութեան ուսուցիչ Գորեկովի աղջկայ հետ, որը ժառանգել է հօրից սրտի եւ ձգտումները մաքրութիւն: Երիտասարդ կինը (Պոլեակովա) չէ կարողանում տանել իր ամուսնու տան միջնորդը, որտեղ իշխում է կեղծ, կոպիտ եւ դատարկ կեանք եւ վերադառնում է իր հօր տունը: Սակայն հայրը համոզում է նրան վերադառնալ իր ամուսնու տունը եւ զբաղվել նրա գործարանի աշխատողների կրթութեան եւ խնամապարտութեան գործով:

Պիեսը ուժեղ տպաւորութիւն չէ թողնում, բայց չարժում է հետաքրքրութիւն այն կենսական դեբիւ նորահիւ, որոնցով ընթրողված է ժամանակակից հասարակութեան որոշ շրջանը:

Իմ պաշտօնական գրուածներից կամ բնականութիւնը կամ իսկական խօսքերը լրագրութեան նիւթ դարձնել կամ առանձին պատճէններ հանել եւ ցրվել զանազան տեղեր.—թէ նրանով, որ իմ գրութեան մէջ երեւում են արտայայտված մտքեր կամ խօսքեր, որոնք հասարակութեան դատաւարանին ներկայացնելու, հասարակութեանը ծանօթացնելու արժանի են, այն ժամանակ ինչու հրապարակ չը հանել իմ այն յայտարարութիւնները, որոնք չօգտվում են զանազան ժամանակակից խնդիրներ եւ արտայայտում են հայեացքներ եւ կեղեցուկ կանոնական իրաւաբանական տեսակետների նկատմամբ: Բայց այդ թողնենք, բուն խնդրին մօտենալու համար:

Ինչու հրաժարվեցի Ատրպատականի առաջնորդութիւնից:

Այդ վիճակի պէտքերին եւ կարօտութիւններին շատ լաւ ծանօթ եմ. մի ժամանակ էլ նոյն իսկ մեծ փափազ ունէի Թուրքի գնալու, բայց հանգամանքները այլ ճանապարհ բաց արին իմ առաջ, եւ ինձ վիճակվեց Ատրաքսանի թեմը կառավարել:

Պէտք է ասել, որ Ատրաքսանը իբրեւ Ռուսաստանի հայոց առաջին եւ երկար ժամանակ միակ վիճակ հուց ի վեր եպիսկոպոսների եւ վարդապետների փափագի եւ իդէալի առարկայ է եղել.—Ատրաքսանը շատ հարուստ եկեղեցիներ, հարուստ ժողովուրդ ունի. նրա առաջնորդները շատ արդիւնք են ստանում. Սերովլէ եպիսկոպոսը Ատրաքսանի առաջնորդութիւնով դիզեց 40,000 ռուբլին—այն հրապարակները, որոնք կապել էին եւ

Պիեռը չէ տալիս դերասանների համար ազդեցիկ եւ տպաւորութիւն գործող տիպեր եւ պահանջում է համեմատել խաղ, ախոյ անսամբլ, որը եւ երեւան եկաւ դերասանների ներդրանքի խաղի մէջ: Համեմատաբար աւելի ուժեղ եւ յուզիչ կտորներ պարունակում է իր մէջ Րիդուլի կնիքը դերը: Դերասանուհի Պօլիակովա այդ դերում տպաւորութիւն գործեց չորրորդ գործողութեան վերջում:

Ք.

ՆԱՄԱԿ ԼԱԳՕԴԵՆԻՑ

Յունիսի 6-ին

Բալթիանիում մի քանի տարի մայրաքաղաք յետոյ, եւ մի առանձին ուրախութեամբ շտապում էի տուն, վաղուց սպասած ոյժերս վերականգնելու համար: Յունիսի 1-ին թիֆլիսից պատառնալի կառքով ճանապարհվեցի դէպի Սրդնախ: Անցանք վերջին կայարանը (Յաճարթ), անցանք եւ այն անգը, ուր Բալթիանիի ճանապարհը բաժանվում է Սրդնախի խնուղուց, երեք-չորս վերստ հազիւ էր մնացել, որ հասնեն վրացի գիւղերին, որտեղից ամբողջ ճանապարհը մինչեւ Սրդնախ գիւղերի միջով է անցնում, սակայն բանից դուրս եկաւ, որ այդտեղից արդէն իրաւունք չունենք անցնելու առանց խուզարկվելու (ինչպէս ընդունված է սահմանադրւի վրա): Այս անգամ աւագակապետ Ալասկալը իր կործնական փոխարինել էր սահմանադրւի ծառայողներին: Հինգ հոգի էին, բոլորը գէնքի մէջ կորած, եւ ինչ, ընթերցող, բանից դուրս եկաւ, որ նոյն իսկ իմ կոչիկները առանց մաքսի էին, այնպէս որ այն էլ փառաւոր կերպով հանեցին եւ տարան: Եւ մնացի ոչ թէ միայն բոլորի, այլ նոյն իսկ արկուր: Այդ մի եւ նոյն օպերացիան բոլորի հետ ամենայն բարեխղճութեամբ կատարելուց յետոյ, մեզ ազատ թողին շարունակելու մեր ճանապարհը: Կտնգնեցին էին երեք օմիկրոն մինչեւ 25 հոգի մարզկանցով:

Այդտեղից, ինչ ասել կուզէ, որ մենք անփորձ հասանք Սրդնախ, որտեղ կայարանում սպասում էին մեզ ոստիկանապետը, ծառայողները եւ շատ հետաքրքրվողներ: Իսկոյն մեզանից խլած իրերի արձանագրութիւնը կազմեցին, որ Ալասկալից վերադառնալի հետ միասին եւս պահանջին եւ տան միջոց: Եւ չը կարողացայ Սրդնախ երկար մնալ, միւս օրը մի կերպ հասայ Լազոգի, իսկ երկու օրից յետոյ եմ գնալու Կրկին Բալթիանի: Շատ էլ Բալթիանի տաք է, ընթերցող, բայց երբ հրացանի փամփուշը աչքիդ առնելու դընտում են հրացանի մէջ եւ փորոք դէմ անում կրծքիդ, մի եւ նոյն է, այն ժամանակ մարդ աւելի մեծ տաքութիւն է զգում, քան երբ եւ ինչ Բալթիանի եղած ժամանակ: Սրդնախի վաճառականներից մէկը չորս բուրձիանոց կօշիկը ծախեց ինձ վեց բուրձիով:

Ուշապատուր Նարինեան

կապում են հայ կուսակազմի եկեղեցականներից շատերի հակակազմութիւնը Աստուծոյն առնուած հետ: Բայց կայ եւ դրա հակառակ նորադոյն հակակազմութիւնը: Աստուծոյն խոնարհ եւ անառողջ երկիր է. իզուր չէ, որ դատարանները շատ յանցաւորներին այնտեղ են ուղարկում ապրելու:

1893 թվ. Նոյեմբերի 12-ին Նորին Ս. Օծութիւնը սինդը եկած լինելով՝ ի միջի այլոց բարեհաճեց ասել, թէ Աստուծոյն առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Սուրենեանց հրաժարական է տուել վիճակից, վատառողջ կլիման տանել չը կարողանալու պատճառով, եւ խնդրում է տալ իրան յնչպիսի պաշտօնատեղ, որ մօտ լինի հանրային ծերմուկների: Եւս ալ, աւելացրեց Նորին Սրբութիւնը, անոր խնդրը յարգելով՝ թիֆլիսը յատկացուցի անոր, իսկ Աստուծոյն զով ուղարկելու: Աստուծոյն զով ուղարկել հարցմունքը լուծուեալս դիմացս նստած Սուրենի եպիսկոպոսը (այժմ հանգուցեալ) յետ ծաղկեց դէպի արժողութիւնը այնքան, որ Նորին Սրբութիւնը չը տեսնէ իր նշանացի շարժումը: Եւ ուղղելով ինձ մի տեսակ աղերսախան հայեացք՝ ձեռք մի քանի անգամ կուրծքին խփեց, հասկացնելով, թէ խնդրում է իր անունը տալ իբրեւ Աստուծոյն թիմի առաջնորդացու: Եւ ես գիշանելով այդ նշանացի աղերսախանի՝ ասացի. «Վեհ. Տէր, Սուրգիս արքայան կարող է Աստուծոյն առաջնորդ լինել, եթէ կամենայ գնալ: Հայրապետը լսեց, եւ ես, ինչպէս յետոյ կարելի եղաւ հասկանալ, մեծ սխալ էր գործել առաջարկելով հեռացնել սինդից եւ Մայր Աթոռից՝ մի այն-

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, յունիսի 3-ին

Բարեկեցիկ Կիրեղ վարդապետ Կիրեղեան «Մշակի» № 99-ում գետնեղ էր մի նամակ, որով բողոքում է իմ յօդուածի դէմ (№ 89) եւ յայտնում է որ՝ «հաշտեաններ ընտրող ժողովը եղել է միանգամայն օրինաւոր եւ ես այդ ընտրութիւնը հաստատելու համար ոչ մի սխալ վկայութիւն չեմ տուել» եւ խնդրում է ինձանից ապացուցանել աւստիս հրապարակով: Կատարում եմ մեծ պատրաստակամութեամբ:

Երեցիքիս պ. Մուրադեան բողոքում է կօնսիստորիային ժողովի ապօրինութեան մասին գրելով. «Ս. Փրկիչ եկեղեցին ունի աւելի քան 1000 տուն ժողովուրդ: առաջին անգամ հրապարակած ժամանակ եթէ ժողովրդի գոնէ 1/5 մասը ներկայ չէ լինում, երկրորդ անգամ պէտք է հրաւիրել եւ ապա թէ կատարված ընտրութիւնը վաւերական համարել»:

Դուք, հայր սուրբ, ձեր յայտարարութեամբ այս կէտը հերքում էք գրելով. «Ժողովեան 85 (անձինք) եւ ունեւոր ի նկատի, զի ժողովը այդ շարունակութիւն էր նախկին ժողովին»՝ գաի դայն օրինական բառ 22 յօդ. հրահանգի բարձր սրբազան առաջնորդին:

22-րդ յօդուածն է. «Եթէ ժողովը չը կայանայ ծիսականների օրինական թիւի պակասութեան պատճառով, այն է՝ ընդհանուր թիւի 1/5-ից ոչ պակաս, հրաւիրվում է երկրորդ ժողովը. երկրորդ ժողովը որոշումները վաւերական են, որքան անգամ էլ ներկայ լինի այդ ժողովին»:

Հայր սուրբ, ձեր բերած 22-րդ յօդ. ժողովի շարունակութեան մասին չէ խօսում, այլ առաջին անգամ չը կայացած ժողովի փոխանակ երկրորդ ժողովը հրաւիրելու մասին, իսկ որ երկրորդ ժողովը եւ «շարունակութիւն ժողովին» տարբեր բաներ են՝ պարզ է:

Այժմ հրապարակ հանեց գործադիր իսկական հրաւիրալիս ամբողջապէս. «Արաւելայի բարեկեցիկ հասարակութիւնը ամսոյ 9-ին, յառաջիկայ կիրակէ օրը, ա. պատարագից յետոյ, ժամը 10-ին, հրաւիրուում է յալորդարանի դահլիճը վիճակից բարձր փոխանորդի նախագահութեամբ ժողովի ս. Փրկիչ եկեղեցւոյ պատկանալ գետնեղների վրայ եղած բոլոր խարխուլ շինութիւնների վերջնաւոր, նոր եւ աւելի նպատակաւորաբար շինութիւններ հիմնարկելու որոշումներ կայացնելու եւ նոյն եկեղեցւոյ պ. երեցիքիսանի հայինքը ստուգելու վաւերացնելու, 5 յուլիսի 1900 ամի յԱրաւելայ»:

Առնենք եւ յուլիսի 9-ին 85 հոգուց կայացած ժողովի արձանագրութիւնը... «Արքայան առաջնորդի հրամանով, այսօր առաւօտեան ժամի 10՝-ին, տեղիս յալորդ հայր Կիրեղ Կիրեղեանի նախագահութեամբ յալորդարանի դահլիճում տեղի ունեցաւ Արաւելայի հայ հասարակութեան ս. Փրկիչ եկեղեցւոյ ծիսականների ընդհանուր ժողովը»:

1) Ոչ գործադիր հրաւիրագրի եւ ոչ ժողովի արձանագրութեան մէջ «Երկրորդ ժողովը կամ ծիսականի ժողովի շարունակութիւն» խօսքերը չը կան: Ուրեմն այն ոչ երկրորդ ժողով էր եւ ոչ շարունակութիւն:

2) Նախավերջին ժողովը եղել է յունիսի 18-ին, որ եւ կայացել է եւ ընտրութիւններ է կատարել. հետեւապէս յուլիսի 9-ի ժողովը ընտել չէր կարող յունիսի 18-ի ժողովի շարունակութիւն լինել:

այիս օգտակար ոյժ: 1895 թվ. ժամանակի Բագու Լէնքօ-րանի հանքային ջրերը գնալու համար, այդտեղ էլ առաջին անգամ կարգացի այն հետազոտող, որ ուղղված էր Արձագանքին՝ Պետերբուրգից, ուր գտնվում էր Վեհ. Կաթողիկոսը, Աստուծոյն թիմի առաջնորդ նշանակվելու մասին: Սեպտեմբերի կէսին Էլմիթանից մեկնեցի նոր պաշտօնատեղիս գալու համար: Հազիւ մի քանի ամիս էր անցել Աստուծոյն զաւուցս յետոյ, որ Էլմիթանից գրում էին ինձ, թէ այստեղ տիրող կարծիք է, որ դուք երկար չէք մնալ այդ վիճակում, իբրեւ զրոգանք ձեզ պատահած այդ փոփոխութիւնից եւ շուտով հրաժարական եւ տաք: Մի ուրիշ թղթակից էլ հաղորդում էր մի այլ լուր, որ վերոգրեալին իբրեւ հաստատութիւն էր ծառայում: Հեռանալով Էլմիթանից՝ ես պահեցի իմ վրա ս. Շողակաթի վանահօր պաշտօնը եւ նշանակել տուի արժ. Սահակ վ. Ամատունուն փոխանորդ վանահօր: Այս այդ իմ փոխանորդին, ինչպէս գրում էր երկրորդ նամակագիրը, խորհուրդ են տուել հրաժարվել փոխանորդութիւնից եւ խնդրել կարգել իրան վանահայր, քանի որ վանքը կառուցվաւորու ներդրութիւնն ինքն է կրում. եւ այս դարձեալ «տիրող կարծիք» հետաետեւութեամբ. —եւ շուտով հրաժարական կը տամ վիճակի առաջնորդութիւնից, այն ժամանակ կը գնամ, կը նստեմ իմ վանքում—Շողակաթում. իսկ այդ մի եւ նոյն է ասել թէ կը նստեմ Էլմիթանում:

Սակայն այդպիսի կարծիքները միանգամայն

նախութիւն լինել առանց այդ մասին արձանագրութիւնների մէջ յիշատակութիւն մուծանելու:

3) Այս ժողովը չէր կարող նախկին ժողովի շարունակութիւնը լինել, քանի որ բոլորովին քանդել է այն ժողովի վիճակը, ինչպէս ապացուցանում են արձանագրութեան այս խօսքերը. «Որոշվեց փոխանակ 3 յարկանի շինութեան, ինչին 2 յարկանի, որով յունիսի 18-ին կայացած ժողովի վիճակը անհետեւանալով թողնեց»:

4) Այս ժողովը չէր կարող ոչ կրկնութիւնը եւ ոչ շարունակութիւնը համարվել առաջվայ ժողովի, քանի որ այն ժամանակ մի շինութեան 2 թէ 3 յարկանի կառուցանելու եւ երեցիքի մի շինութեան հաշիւ ներկայացնելու խնդրներն են եղել զրված, իսկ վեհ. առաքյալ զարձած ժողովին առաջարկված են եղել բոլոր խարխուլ շինութիւնների վերջնաւոր—նորերը շինելու եւ երեցիքիս սովորական հայինքը ստուգելու—վաւերացնելու նոր խնդիրները:

Հայր սուրբ, դուք վերադարձվել իմ խօսքերից՝ «առաջնորդների շատ նշանաւոր մասը անխառն է եղել այդ հաշտեանների ընտրութեան ապօրինի ժողովին», գրում էք. «Ըզբրանում ոչ որ մեղաւոր չէ, բայց իրանցից, որովհետեւ... իրանց անտարբերութեան կամ ուրիշ իրանց յայտնի պատճառներով չէին բարեհաճել ներկայ գտնվել: Դարձեալ սխալ է, չէ որ հէնց ձեր ակնարկած նախկին ժողովը բացվել է 250 ծիսականների ներկայութեամբ: Ուրեմն նրանք անտարբեր չեն եղել»:

Հայր սուրբ, դուք գրում էք. «Երովհետեւ այդ եւ ուրիշ հարցերի մասին երբեք անգամ ընդհանուր ժողով հրաւիրվելուց եւ չը կառուցանվուց յետոյ նշանակված էր եղել չորրորդ անգամ: Ներքեցք, պաշտօնական թղթերն ասում են, որ այդ հարցի մասին առաջին անգամն է եղել, որ ձեր ակնարկած ժողովները կայացել են, վիճիւններ են արձակել, այս վիճիւնները կօնսիստորիա են ուղարկվել, հաստատվել են, դարձեալ քանդվել են: Այնպէս որ, հայր սուրբ, եթէ մի ժողով այնքան օրինական է ճանաչվում, որ նախագահողի կողմից բացված է հրատարակվում, վիճիւններ է կայացնում, բայց վիճիւններ չը հաստատելու պատճառով պէտք է լինում նոր ժողով գումարելու—այս նոր ժողովը չէ կարող ոչ հնի կրկնութիւնը, ոչ շարունակութիւնը լինել, ինչպէս սխալ վկայել էք»:

Լիազոր քննիչ Մեարզ քահ. Մեխան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Մեզ գրում են Բերլինից հետեւեալը. «Երաւամբ նշանակել իրողութիւն մըն է այն աշխուրհները, որ երկուստեք հայ նկարիչ պ. Վարդան Մախոբեան ունեցած է վերջինս Գերմանիոյ մայրաքաղաքին մէջ: Իր երկու նկարները, Winterabend (ձմեռայն երեկոյ) եւ Brandung (այլգրեւոր փրվումը), այս տարվան Բերլինի միջազգային մեծ գեղարուեստահանդէսի ժիւրիէն գնահատվելով, ցուցադրութեան պալատի մէջ ընդունված եւ արժանավայել կերպով անուանի պրօֆեսորներու ներկայութեան կից զետեղված են: Մախոբեան երկար տարիներ է ի վեր եւսպական գեղար-

անտեղի էին, այն օրից մինչեւ այսօր եւ իմ վիճակում եւս եւ չը կամեցայ հրաժարվել նոյն իսկ այն ժամանակ, երբ Ատրպաթականի թիմի առաջնորդութիւնն ինձ առաջարկեց:

Ի դէպ՝ դեռ յիշեալ թիմի պատգամաւորական ժողովի ընտրութիւնից բաւական առաջ ստացել եմ մի նամակ, որ հաղորդում էր ինձ, թէ Վեհ. Կաթողիկոսը (անցած ձմեռ թիֆլիսում եղած միջոցին) պ. Աղ. Մ. Ա. ասել է հետեւեալը. «Դու բարեկամ ես Արիտաւակէս եպիսկոպոսին. չէս կրնար յօժարեցնել զինքն, որ յանձն առնէ երթալ Թաւրիզ առաջնորդ, եւ կուզեմ զինք այնտեղ նշանակել»:

Այդ տողերը կարդալուց յետոյ, չէի կարող անտես առնել բացառութեան կրօնով մի քանի հարցեր. օրինակ՝ առաջին՝ եթէ Նորին Սրբութիւնը կամենում է ինձ Թաւրիզի առաջնորդ տեսնել, ինչո՞ւ արդեօք այդ հայրապետական կամքը ոչ ուղղակի ինձ, իր անմիջական ստորադրեալին է յայտնում, այլ երկրորդ անձի միջնորդութեամբ: Երկրորդ՝ որպիսի լուրջ պատճառներ կարող էին ինձ մի թեմից միւսը փոխադրելու օգտին ծառայել: Յայտնի է, որ երբ մի վիճակաւոր թիմ է կառուարում, նրան այնտեղից փոխադրելու հարց է լինում կամ նրա խնդրի համաձայն, կամ թիմի ժողովրդի գնահատանի, բողոքների հիման վրա: Եւ դեռ խնդրեք չեմ տուել Աստուծոյն թիմից հեռանալու համար. իսկ թէ իմ ժողովուրդը բողոքել է ինձանից, չը գիտեմ. եթէ բողոքած լինի, այն ժամանակ, այդ հիման վրա, մի վիճակից հեռացրել եպիսկոպոսին մի ուրիշ վիճակ պէտք է փոխադրել, թէ մի-

ւետական զանազան կենտրոններու մէջ ուսումնասիրութիւններով կը պարապի (այժմ Դանիալաք կը գտնվի) ու ստեղծ արժանաւոր է հոշակաւոր վարպետներու գովասանաց, ի միջի այլոց եւ Ալվազովսկիի: Որովհետեւ մօտաւոր ապագայում իր գործունէութեան ապարէզը կողմաս պիտի լինի, սրա համար ահա ուղեցի մէկ քանի տողերով զինքը նախապէս ծանօթացնել գեղարուեստով հետաքրքրող ընթերցողներու:

Յունիսի 8-ին ֆինանսների մինիստրութեան կից կազմված խորհրդակցութիւնը առեւտրական կրթութեան մասին մի քանի ենթախնդիրներով ընտրեց, մի եւ նոյն ժամանակ զատարարութեան հարցերի համար: Ենթախնդիրները ընտրեց, մի եւ նոյն ժամանակ ընթերցողները խորհրդակցութեան հետեւանքները: Ենթախնդիրները այսօր առաւօտ ներկայացրեց ժողովին իր աշխատանքների հետեւանքները, թէ ուսուցումը եւ զատարարութիւնը պէտք է անբաժան լինեն եւ դէմ է պատժական միջոցների աշակերտների համար: Ենթախնդիրները ամենեւին ցանկալի չէ համարում ժամանակաւորապէս զրկել աշակերտներին ազատութիւնից եւ առանց կերակրի թողնել նրանց: Օսմանական շնչապէս ցանկալի չէ համարում պահել վերահսկողներ եւ դատարանական դատարարներին օգնականներ, որոնց պարտաւորութիւնն է հսկել աշակերտների բարեբաղնութեան եւ վարքի վրա: Ենթախնդիրները կարծիքով, ուսուցիչները պէտք է նոյնպէս եւ դատարարներ լինեն: Ինչ վերաբերում է աշակերտների վարքի համար առանձին կանոններ մշակելուն, ենթախնդիրները ժողովը այդ կանոնները ձեւակարգ է համարում եւ յամենայն դէպս, եթէ պարոյնների տեղական իշխանութիւնը հարկաւոր էլ համարէ այդպիսի կանոններ հաստատել, նրանց գործադրելուց առաջ նախապէս պէտք է այդ կանոնները իւրաքանչիւր անգամ ուղարկվեն ֆինանսների մինիստրութեան ուսումնաբարական բաժնին: Ենթախնդիրները մանրամասն քննելու համար: Ենթախնդիրները նախադաժ, ֆինանսների մինիստրութեան ուսումնաբարական մասի տեսուչ Գրիգորիով ժամանցոյց արեց, որ առեւտրական կրթութիւնը պէտք է բազմակողմանի լինի. առեւտրականները, որպէս հասարակ ժողովրդի հետ գործ ունեցող անձինք, կարող են ոչ միայն հարստահարողներ լինել, այլ եւ այնպիսի մարդիկ, որոնք օգուտ են բերում նոյն ժողովրդին: Որքան աւելի կաւարկվեն նա առեւտրական, այնքան նա աղքատ կերպով կը վարէ առեւտրական գործերը, այնքան նա աւելի սրտին մօտ կ'առնէ ժողովրդական կարիքները: Խորհրդակցութեան անդամ ի. Գ. Կոզան առաջարկեց, որ անհրաժեշտ է, որ կառավարութիւնը ստուգի իր տալ առեւտրական զարգացման կառուցանելու համար: Առաջարկութիւնը կատարեալ համակրութեամբ ընդունվեց խորհրդակցութեան անդամների մեծամասնութեան կողմից:

Երբորդ՝ Նորին Ս. Օծութիւնը Ատրպաթականի թիմի ժողովրդին իրան է տուել կոնգակով առաջնորդական ընտրութեան իրաւունքը, արդ՝ որպիսի հարկաւոր պատճառներից ստիպված բարեհաճում է ընտրութիւնից շատ վաղ այդպիսի փափագ յայտնած լինել. չէ որ ժողովրդական պատգամաւորները պիտի ընտրութիւն կատարեն. ուրեմն կայ արդեօք Մայր Աթոռի եւ Թաւրիզի մէջ այդ մասին նախօրօք եղած համաձայնութիւն: Ատրպաթականի թիմի պատգամաւորական ժողովի հետադիւր ստանալուն պէս եւ իսկոյն հրաժարական յայտնելի: Այդ թիմի կարօտութիւնները, պակասութիւնները շատ շատ են. բայց այդ բոլորին քիչ ու շատ հոգատար լինելու համար հարկաւոր են նիւթական միջոցներ եւ երկար տարիներ: Թեմական ժողովուրդն ինքը միջոցներ չունի. դրա համար էլ այդ թիմում որ եւ հիմնական, օգտակար գործ արած լինելու համար հարկաւոր է հրաւէր կարգաւարտաբար Պարսկաստանի գտնվող ազգայիններին, նապաստել խնդրել. իսկ դրա համար, ինչպէս ասացինք, հարկաւոր է ժամանակ, արդ՝ ոչ է երաշխաւորում, որ Ատրպաթական գնացող առաջնորդը մի քանի տարիներ պաշտօնի մէջ կը լինի. եւ մի կամ երկու տարուց յետոյ ս. Էլմիթանի սինդի մի հետադիւր չի հարկաւորի նրան թողնել Թաւրիզ եւ վերադառնալ, թէկուզ որ եւս պաշտօն կատարելու համար:

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան

Պետերբուրգում 1902 թվին պատմական եւ ժամանակակից զգեստների միջազգային ցուցահանդէս կը կազմվի: Կազմակերպող մասնաժողովը կայացրած նիստում ընտրվեցին՝ ցուցահանդէսի պատուաւոր նախագահ—Ֆինանսների մինիստրի օգնական Վ. Ի. Կովալէվսկի, նախագահ—Իլյանուսի Մ. Ս. Շչերբատովա, իսկ ընդհանուր կօմիսար—Ա. Ֆ. Օստրոգրադսկի:

Միջնակարգ դպրոցը վերակազմելու համար կազմված յանձնաժողովը, որ հրաւիրված էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կողմից, աւարտեց իր պարագմունքները Միւնխարը չնորակալութիւն յայտնեց յանձնաժողովի անդամներին նրանց ուշադիր եւ բարեխիղճ վերաբերմունքի համար զէպի այն գործը, որով հետաքրքրվում է այժմ ամբողջ Ռուսաստանը: Յանձնաժողովի աշխատանքների ինքնիշխան կը դասուորվեն բաժիններով, եւ չլուծով նրանց պատշաճաւոր ընթացք կը տրվի: Մեր ունեցած տեղեկութիւնների համեմատ, ասում է «Речь. Вѣд.» լրագիրը, աշխարհ յանձնաժողովը կը վերսկսէ իր պարագմունքները՝ քննութեան ենթարկելով իրական միջնակարգ եւ տարրական կրթութեան հարցերը: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ճառին պատասխանեց Վ. Ի. Կովալէվսկի, որը չնորակալութիւն յայտնեց պատկասելի նախագահին նրա զարմանալի անկողնապահութեան համար վիճաբանութիւնները ղեկավարելու ժամանակ եւ ընտրուեց յանձնաժողովի գործունէութիւնը, որպէս ծագող արշալույս ժողովրդական լուսաւորութեան գործում: Յանձնաժողովի աշխատանքների հետեւանքները կողարկվին ուսումնարանական չըլաններին ժանկարկաբանական խորհուրդների մէջ քննելու համար, նոյնպէս եւ նախագահներին՝ քննութեան ենթարկելու համար այն խորհրդակցութիւններում, որոնց կազմի մէջ կը մտնեն՝ ազնուականութեան պարագլուխները, զէստօխի վարչութիւնների նախագահները, քաղաքագլուխները եւ առանձին առնձինք, որոնց կարծիքը օգտակար կը համարվի լսել:

Պետերբուրգում մեզ գրում են. «Պետերբուրգի հայոց եկեղեցին համարեա թէ միակն է հայ եկեղեցիների մէջ, որի ամբողջ միաբանութիւնը ոտնիկ է ստանում, այն էլ խոշոր գումարների: Երկու քահանայ, 1 աւագ սարկաւազ, 1 սարկաւազ ու 1 տիրացուն ստանում են 8433 ռ. 18 կօպէկ ու պատրաստի բնակարաններ փայտով ու ջրով: Այդ բնակարանների գինն է բոլորը միասին 4740 ռ., ուրեմն հիմից հողի ստանում են 13,173 ռ. 18 կ. բացի այս բոլորից, ի հարկէ, ծխականներից էլ ունեն սովորական եկամուտ: Յաւելին այն է, որ այսպիսի ապահով գրութեան մէջ գտնվող հոգեւորականները ամենայն ինչ, բացի հոգեւորական լինելուց Ուղղակի ամօթ է Պետերբուրգի գաղութի համար այս տեսակ անգոյն եւ անհորջ հոգեւորականներ ունենալ: Զայտիւ է, ուրիշ ազգութիւններ ունեն իրանց աչքի ընկնող հոգեւոր երկրայացուցիչներ, բայց մենք էլ յետ չենք մնացել: Պետերբուրգի քնաթափա հայեր, գոնէ ապագայի մասին մտածեցէք, գոնէ ապագայում ունեցէք մի հատ քահանայ:»

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Ղազանչեցոց եկեղեցու բակում կանգնեցրին արձան հանգուցեալ Թադէոս Թամբրեանցի գերեզմանի վրա: Արձանը ամբողջովին սեւ մարմարիօնից է, պատրաստված Մօսկվայում եւ նստել է 4000 ռուբլի:»

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Բախիշի գիւղում անցեալ տարվայ յունիսի 23-ին վէճ է ծագում երկու եղբայրների մէջ՝ Իլյաս եւ Մահմադ-Հուսէյն: Երբեք անց մէջ՝ Վէճի բուն պատճառը հօրից թողած ժառանգութիւնը բաժանելու գէպն է լինում: Անդրանիկ որդին՝ Մահմադը գրկում է իր ամենակրտսեր (հինգ տարեկան) եղբոր Իլյասին. այդ դեռ բաւական չէ, սպառնում է նրան պատժել՝ դանգաժելով ամենաւերջ Գերբէյի-Բէյի-Մասում-Օղլու մօտ: Եւ այդպէս էլ անում է, գնում է նա նոյն օրը տանուէրի մօտ. բայց Իլյասն էլ է գնում, որին Մահմադը ճանապարհին չէ թողնում, որ գնայ տանուէրի մօտ: Կոն է ծագում այդ միջոցին, եւ այդ կռիւ մէջ Իլյասը գում է այդ միջոցին, եւ այդ կռիւ մէջ Իլյասը արձանակով եւ սրով սպանում է իր եղբորը: Այդ գործի քննութիւնը նշանակվում էր այս յունիսի 6-ին Բագուից այստեղ եկած նահանգ

գահան դատարանի բաժնում: Մեղադրեալին պաշտպանում էր Մ. Սալամբէգեան: Դատարանը Իլյասին դատապարտեց երկու եւ կէս տարի բանտարկութեան:»

ՍՈՉԻՑԻՑ մեզ գրում են. «Յունիսի 8-ին, կէս գիշերին 4—5 աւազակներ չըլապատում են Ուշադէր գիւղամասի մէջ հաստատված Ուստա-յան Պօղոսի տունը՝ կողոպտելու նպատակով: Երկու կողմից տեղի է ունենում հրացանաձգութիւն, որի ժամանակ աւազակներից մէկը գնդակահար սպանում է, իսկ միւսները փախչում են: Սպանվածը ճանաչվեց իր հայրենակիցներից, Չարչապալայի (Սամսոն) գիւղից է, Գարբիէլ անուն մի 25—28 տարեկան երիտասարդ, որը երկար ժամանակից ի վեր գաղտնի աւազակութեամբ էր պարագում: Գաղտնի աւազակութիւնը շատ տարածվել է մեր գաղթականական չըլանում. օր չէ անցնում, որ մի ընտանի կենդանի չը գողացվի կամ մի տուն չը թալանվի եւ, ինչպէս երեւում է օրէցօր ստացվող փաստերից, այդ աւազակախմբերը կազմված են մեծ մասամբ հայերից, չարչապալայի գաղթական հայերից, որոնք եկած են իր բանուր (գիւղացիները բիւլից է ստում են) մի քիչ փող աշխատելու եւ օգնութիւն հասցնելու իրանց ընտանիքին: Ծանր, տոկոս աշխատանքի միջոցով անկարող կամ անընդունակ լինելով կենանքի մէջ աղողութիւն ունենալ, դրանք աչք են տնկում իրանց երկրագործ եղբոր արիւն քրտինքով ձեռք բերածին եւ քաջալերվելով մանր-մունր աղողութիւններից, դառնում են պատուհաս իրանց հիւրաբերողների գլխին: Նրանք թաքստոցներ ու ընկերակիցներ ունեն Թուախի, Սօչի, Ասլէրի եւ Սուխումի գիւղաշրջաններում եւ անդադար երթեւեկում են մէկ չըլանից միւսը եւ մի տեսակ խորհրդաւորութիւն տալով իրանց չըլապալութիւններին, վախեցնում են իրենց գիւղացիներին եւ ազատ են մնում օրինական պաշտօններից: Այդ աւազակախմբերը օգնում են այս ու այն լակոտին ալքիլիներ առեւանգելու համար եւ այդպիսով վայելում են նաեւ տէրաւորների համակրութիւնը, որովհետեւ այս վերջինների «մեղքը է» ստելով հարկերաւոր բուրլիներ կորցում են այդպիսի պատկերից: Սակայն այդօրինակ աւազակութիւններից մնացած է ամբողջ գիւղական համայնքը, կողոպտում է աշխատանքի հերոս երկրագործների բարի համբար եւ մի քանի սրիկանների պատճառով արատաւորվում է ամբողջ ազգը, ամբողջ գաղթական հայութիւնը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, յունիսի 3-ին
Էնդէլի-Թէհրանեան խնդիրն իսկապէս ըսկավում է Փիրաբազար կոչված գիւղից, որ Էնդէլից մօտաւորապէս 36 վերստ է, իսկ Ռաշտից 7-ը վերստ: Այնպէս որ Ռաշտ կամ Թէհրան գնալու համար մինչեւ Էնդէլի-Թէհրանեան ճանապարհի վրա դուրս գալը անհրաժեշտ է ներդրելու պէտք է կրէ ճանապարհորդը եւ եթէ դրա վրա էլ աւելացնենք պարսիկ թիավարների վտի, անպատկառ եւ անվայել վարմունքը, կը տեսնենք, որ ճանապարհորդները համար մի այնպիսի զոհերի դրութիւն է ստեղծվում, որ անհրաժեշտ այստեղից անցնողը միայն ծայրայեղ դէպքում գուցէ համաձայնում է միւս անգամ եւս անցնել:

Պատմենք այն մի քանի անյարձարութիւնները, որոնց ճանապարհորդը հանդիպում է ճանապարհորդը գալիս է չորհնաւով ինչպէս էլ որ, այդտեղից փոխադրվում է չորհնաւակր, եթէ ծովը խաղաղ է, իսկ եթէ ալեկոծում է՝ չորհնաւակր չէ կարողանում ծով դուրս գալ, ճանապարհորդը ստիպվում է համաձայնվել նաւակով դուրս գալ Էնդէլի Պարսիկ նաւաստիները այդպիսի ժամանակին են սպասում, որ կողմին եւ կողոպտեն ճանապարհորդներին, ինչքան որ իրանց ոյժը եւ միջոցը կը ներէ: Նախ նրանք մօտենում են չորհնաւին եւ այս եւ այն նաւաստիները վազդելով՝ աշխատում են գտնել մի լաւ օրս եւ նրան համոզում են, որ ոչինչ վտանգ չը կայ եւ թէ պատրաստ են նրան ամենայն հանդարտութեամբ ծովափ դուրս բերել: Անփորձ ճանապարհորդը խաբվում է նրանց խօսքերից եւ մինչեւ անգամ վարձատրութեան մասին ամօթ է համարում խօսել, քանի որ թիավարները իրանց խոսքով ծառայութիւնն են առաջարկում, իսկ վարձատրութեան մասին աւելացնում են, թէ չինչ կը տաս տուր: Այս խօսքերն անփորձ

ճանապարհորդի համար հասկանալի չեն ձանապարհորդը հիւսաթափվում է, երբ տեսնում է, որ իր վարձած նաւակի մէջ նստած են մի քանի տասնեակ հոգի նաեւ ուրիշ ճանապարհորդներ եւ նաւակի ծանրութիւնը մի կողմից, միւս կողմից ալքները սպառնում են ծովի յուսադրում են նրանց, եւ ինչ փոյթ նրանց, նրանք մարդկանց կենանք շատ է ծան են գրահատում: Վերջապէս ճանապարհորդը, երկար լիցադաւութիւն քաշելուց եւ թիավարների ձեռքից ազատվելուց յետոյ, տեղափոխվում է չորհնաւակ, որը նրան տանում է մինչեւ Փիրաբազարի գետաբերանը «Մուրդաբ» լճի վրայով. այդտեղից նա նորից փոխադրվում է նաւակի մէջ եւ ապա գետի հակառակ հոսանքով թիավարները երկու ժամ շարունակ թուկերով քաշելով տանում են մինչեւ Փիրաբազար գիւղը, որտեղից արդէն սկսվում է խնդիրն: Թէ ինչ դժոխային տանջանք եւ արիւնքաբանք են թափում այդ թիավարները, մահաւանդ անձրեւներից յետոյ եւ կամ դարնան օրերին, երբ գետի ջուրն աւելանում է, այդ միայն երեւակայել կարելի է:

Այսպէս երկար նկարագրութեան պատճառն այն է, որ ընթերցողին գաղափար տամ այն ֆիզիկական եւ բարոյական տանջանքների ու նեղութիւնների մասին, որոնց ենթակայ է ճանապարհորդը: Դեռ այժմ աւելի լաւ է եւ յարմարութիւններ կան, չնորհիւ էնդէլի-Թէհրանեան ճանապարհի ընկերութեան, որն ունի իր սեփական չորհնաւակը եւ նաւակները, որոնք կանոնադրապէս ամեն օր երկու անգամ Էնդէլից գնում են գետաբերան եւ վերադառնում: Բայց երեւակայեցէք ձեզ, ընթերցող, թէ ինչ էր ճանապարհորդի գրութիւնը արանց մի քանի տարի առաջ, երբ նա այդ անգին ջրային ճանապարհը (36 վերստ) ստիպված էր կարել պարսկական անյարձար նաւակներով շարունակ 5—7 ժամում, շատ անգամ փոթորիկի հանդիպելով եւ օրերով ճանապարհը կորցրած՝ եղեգնների մէջ քաղցած նստելով՝ երկնքի օգնութեան սպասէր ու կամ ջրահեղձ լինէր: Այսպէս ճանապարհորդի մասին: Ընթերցողը հետաւորութեամբ կարող է երեւակայել, թէ ինչ դժուարութիւնների է հանդիպում վաճառականը, որ ապրանք պիտի տեղափոխէ այդ ճանապարհով եւ որքան աւելորդ ծախսեր է անում նա, քանի որ այդ ջրային կամ ցամաքային ճանապարհի վրա չը կան յարմարաւոր պահեստներ պարանքների համար, որպիսի փախում եւ գողացվում է եւ ապրանքը կրկնապատիկ թանկ է նստում. աւելացրէք դրա վրա նաեւ ճանապարհային հարկը եւ տեղափոխութեան գինը, եւ դուք տեսնում էք, որ ռուսական ապրանքը Պարսկաստանի վաճառանոցներում, արժէքների թանկութեան պատճառով, չէ կարողանում մրցել եւրօպական ապրանքների դէմ եւ այժմ ի դերեւ է եկնում այն կարծիքը, որ յուսադրում էր շատերին, թէ ճանապարհի չինութիւնը կը նպաստէ ապրանք ներմուծելուն եւ աւելանալուն:

Ռուսաց քաղաքական չըլաններում այս խնդիրը լուրջ ուշադրութեան առարկայ դարձաւ եւ միջոցներ ու յարմարութիւններ ստեղծելու խնդիր յարուցվեց: Առաջարկվեց ընկերութեանը ծովափը խնդիրով կապել Էնդէլի-Թէհրանեան ճանապարհի հետ, ծովափը մաքրել եւ նաւահանգիստ շինել, որ եթէ ոչ մեծ, գէթ փոքր չորհնաւները մօտենան ուղղակի ափին, չինել տալ քարվանսարաններ, ամբարներ, խանութներ եւ բնակութեան տներ, ճանապարհը լայնացնել: Ընկերութիւնը, ի նկատի ունենալով իր սուղ միջոցները, գուցէ եւ էլ իր ուրիշ պատճառներով, վճառական քայլ չարեց այդ խնդիրներում եւ անհ երկու տարի է, որ ոչինչ չէ արված:

Սակայն ռուսաց քաղաքականութիւնը ստանալով չէր կարող նայել այն բանին, թէ ինչպէս Պարսկաստանի վաճառանոցներից դուրս են վաճառվում ռուսական ապրանքները իրանց թանկութեան պատճառով եւ նրանց տեղը բռնում են իրանց որակութեան եւ արժէքի կողմից՝ աւելի գնողներին ձեռնառն առգլիական, կամ ֆրանսիական ապրանքները: Նա ուղարկեց իր ներկայացուցիչներին Պարսկաստանի եւստանաբերդու եւ քննելու տեղային պայմանները: Եւ անհ այս բոլորի արդիւնքներից մէկն այն եղաւ, որ անցեալ շաբաթ տեղային կալուածատիրոջ հետ կնքվեց պայման, որով այն գետինը, որտեղից անցկայվելու է Մուրդաբ լիճը Էնդէլի-Թէհրանեան ճանապարհի հետ կապող գիւղը, արվում է 40 տարով կապվում ռուս կառավարութեանը, որը ընկերութեան

միջոցով յանձն է առնում չինել 7 վերստ ճանապարհ, «Մուրաբաքարաթ» կոչված ծովափում նաւահանգիստ, բնակութեան տներ եւ զանազան ապրանքների պահեստները: Այնպէս որ թէ ապրանքը եւ թէ ճանապարհորդը ուղղակի չորհնաւակով եւ կամ չորհնաւակով ցամաք կիջնեն, իսկ ապրանքի տեղափոխութիւնը կազմավորելու արժեքն օգոյնային պայմաններից, Ընկերութիւնը սալային երթեւեկութիւնը դարձացնելու համար եւ ստիճանաբար քարավանների գոյութիւնը պակասեցնելու նպատակով, փորձ է արել մի քանի տասնեակ սալեր գնել եւ տարածել ժողովրդի մէջ. արդիւնքը դեռ յայտնի չէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit Correspond.» լրագիրը հաղորդում է, որ յունաց կառավարութեան ընթացքը կրէ-տական հարցում ամբողջ ժամանակ օրինական է: Աթէնքի կառավարութիւնը պաշտօնապէս հաւատարմեց Բ. Դրան, թէ ինչն չէ իրախուսել կրէտացիների ձգտումները՝ միասնա Յունաստանի հետ: Ասում են նոյնպէս, որ յունաց կառավարութիւնը իր ժամանակ հաւանութիւն չը տուեց պրինց Գէօրգիի Եւրօպա գնալուն, որը նպատակ ունէր համոզել պետութիւններին ընդունելու կրետացիների պահանջները: Յունաց կառավարութիւնը վախենում էր, որ այդ ճանապարհորդութիւնը կարող է վատացնել յարաբերութիւնները Թուրքիայի եւ Յունաստանի միջեւ: Աթէնքի կառավարութեան այդ ընթացքը եւ պետութիւնների մեծամեծ ընդունելու կրեմին Յունաստանի հետ միացնելու խնդրագիրը՝ կատարելապէս հանգստացրին Բ. Դրան:

«Թէհրանից թուրքաց լրագիրներին գրում են, որ Գ. Պօսի պարսկական դեսպան Միրզա-Մահմուդ-խանը փոխադրվում է Բեքլին:

«Ատրպատականի պարսկական մաքսատների գլխաւորը, բելգիացի Նաուս, Բրիտանիայի «Ind. Belge» լրագրում հերքում է նոյն լրագրում տպված այն տեղեկութիւնը, որ «Բեր թէ Թէհրանի ազգաբնակչութիւնը աստուծով գրգռված է բելգիացի պաշտօնականների դէմ մի քանի հարկ դնելու համար, այսինքն Թէհրան բերվող մատացու կենդանիների վրա»: Պարսկական մաքսատները կառավարող բելգիացիները ոչ միայն հարկ չեն դրել մի քանի վրա, — ասում է Նաուս, — ընդհակառակը, հէնց նրանք էին, որ ոչնչացրին այդ հարկ, ինչպէս եւ առաջ գոյութիւն ունեցող հարկերը այն բոլոր ուսեղեղների վրա, որոնք բերվում էին մայրաքաղաքը գրախ: Մանաւանդ որ Թէհրանի բնակիչները այնքան գոհ մնացին բելգիացիներից հին կարգերը վերացնելու համար, որ Ծանին չնորհա-կալութեան ուղերձ մատուցին:

«Journal des Débats» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում: Իրանի հիւանդութեան մասին. «Ձը նայելով միթիւրական լուրերին, այժմ պարզ է, որ Նորվեգական հոչակաւոր գրողի ատոնութիւնը շատ խանգարված է: Թէպէտեւ անմիջական վտանգն անցել է, բայց Իրանի չի կաղըրվող կաթուածից, եւ կապրի էլի մի քանի շաբաթ, դուցէ մի քանի ամիս: Ինչն Իրանի շատ լաւ է հաւանում իր գրութիւնը: Իր հիւանդութեան ժամանակ նա ցոյց տուեց իր հոգու մեծութիւնը եւ մահկան երկրից բացաղկալութիւնը: Նրա կիւնը հազուադէպ անձնադրութեամբ հող է տանում նրա մասին: Իրանի դեռ էլի շատ դժուարութեամբ է խօսում եւ իր ցանկութիւնները գրաւոր կերպով յայտնելու համար նա ոյժ չունի: Ժամանակ առժամանակ հոչակաւոր գրողը բաց կառքով գրօսանք է կատարում Կոպէնհագէնի չըլապաներում: Ամբողջ չըլապատում է նրա կառքը եւ պատկանանքով ողջունում է: Ձը նայելով որ այդ ցոյցները արտայայտվում են շատ զուգա կերպով, նրանք յոգնեցնում, գրգռում են գրողին եւ ստիպում են նրան ընդհատել գրօսանքը: Հիւանդութեան ժամանակ ստացված են անթիւ համակրական հեռագիրներ:»

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«New-York Herald» լրագիրը տպում է ամերիկական բոլոր միլիոնատերերի ցուցակը: Ամերիկայում այժմ 3, 28 միլիոնատերեր կան: Արդիւնքով, Միացեալ-Նահանգների իւրաքանչիւր 20,000 բնակիչների վրա ընկնում է մէկ միլիոնատէր: Այդ բոլոր միլիոնատերերի կարողութիւնը միասին վերցրած անցնում է 16 միլիարդ դոլարից, այսինքն Ամերիկայի 76 միլիոն ազգաբնակչութիւնից 3828 մարդիկ իրանց ձեռքում ունեն Միացեալ-Նահանգների ամբողջ աղքատին հարա-տոյութեան հինգերորդ մասը:

Շատ արագ է անում Ամերիկայում միլիոնատերերի թիւը: Անցեալ XIX-դ դարի առաջին քառորդում Ամերիկայում միայն վեց միլիոնատերեր կային, եւ միայն զրանցից երկուսը՝ Ջոն Եսկրը Ատոր Նիւ-Եօրկում եւ Ստեֆենս Թիրարը՝ Ֆիլադելֆիայում, երեք միլիոն դոլարից աւելի կարողութիւն ունէին: Այժմ նրանց թիւն արդէն 3828 է. նրանցից կէսը 10 միլիոն դոլարից աւելի կարողութիւն ունի իւրաքանչիւրը: Այդ միլիարդերների խմբակի գլուխ է կանգնած հռչակաւոր Ջոն Բօկիլէյլը, որի կարողութիւնը այժմ հաշոււ են 300 միլիոն: Առանձին անհատների հարստութեան արագ աճումը Ամերիկայում բացատրվում է, — վերոյիշեալ

լրագրի խոսքով, նրանով, որ հարուստները եւ մինչեւ անգամ ամենահարուստ մարդիկ Սանդիկովում չեն հեռանում գործերից, այլ շարունակում են ամենաշնորհ մասնակցութիւն ընդունել առեւտրական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւններ մէջ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
12 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այստեղ ժամանեց գերմանական զինուորական պատգամաւորութիւնը, գլուխ ունենալով գեներալ Կոստ Փօն-Մօլտ-կէյն:

ՕՂԵՍԱ: Կամաւոր նաւատորմի «Տամբով» շոգնաւով ժամանեց տիբեթցիների արտակարգ դեսպանութիւնը: Դեսպանութեան գլուխն է լամա Դօրօֆի, Դեսպանութիւնը եկել է զալայ-լամայի կողմից եւ բերում է ընծաներ եւ զալայ-լամայի ձեռքով գրված նամակներ: Հանդիպումը հանդիսաւոր էր: Գաղափարաւոր ողջունեց աղուհաց մատուցանելով: Երկու օրից յետոյ դեսպանութիւնը գնում է Պետերբուրգ:

ՁԻՍՏՈՂՈՒ: Անձրեւներ եկան, նպաստաւոր ազդեցութիւն գործելով հացարոյների վրա: ԲԵՐԼԻՆ: Շնորհիւ այն հանգամանքի, որ սաքսոնական երկու խոշոր բանկեր սնանկացան, գերմանական բանկը բաժանումը բացեց Լէյպցիգում, իրագործելով իր վաղվայ դիտաւորութիւնը:

ԳՐՈՂԻՆԱ: Սաստիկ չոքեր ի անում. տաքութիւնը հասնում է 40 աստիճանի:

ԼԵՅՊՏԻԳ: Լէյպցիգի բանկի վերահսկող մասնաժողովը յայտարարում է, որ Իրէզզէի կրէդիտային բանկի անակոթութիւնից յետոյ եւ իր մուրհակների զեղչման դժուարութեան պատճառով, ինքը հարկադրված է, իր կրէդիտորների շահի համար, առժամանակ դադարեցնել վճարումները: Բանկը հաւատարմութիւն է, թէ պարտաւորեցին աստիճանաբար բաւարարութիւն տալով կրէդիտորների կորուստների առաջ կանգնելու եւ բաժնետերերն էլ օգուտներ կունենան: Բանկի դրամագլուխը 48 միլիոն է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վարձատրութեան հարցը, ըստ երեւոյթի, լաւ է վճարում եւ ընդհանրապէս անգլիական առաջարկութիւնների համաձայն: Այնուհետեւ դեսպանները համաձայնութեան եկան, որ մի քանի ապրանքների մաքսերը որոշէ միջազգային յանձնաժողովը եւ այդ մաքսերը չորսշիւս ապրանքի գնով, Յետոյ վճար են ձեռնարկել գետի կանոնաւորումը Շանգհայի ու Տեանձինի մօտ, չինական կառավարութեան ֆինանսական մասնակցութեամբ: Մնացել են միայն երկու չը վճարված հարց: Եւրոպական պահանջում է, որ վարձատրութեան գումարը աւելացվի այնքան, որ ինքը վարձատրվի այն վնասների համար, որ կրելու է այն պատճառով, որ ներկայ պայմաններում անկարող է բաց թողնել 40% փոխառութիւն անուանական գներով: Այդ ցանկութիւնը կատարելապէս հիմնաւոր է ձանաչվել: Բոլոր պետութիւնները մասնացոյց են արել իրանց պահանջած վարձատրութեան գումարը, ուստի հաւանականօրէն չուտով չինացիներին կը յանձնվեն պահանջների իսկական գումարները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱՅՈՒՄ, Մեքսիկոյ քահանայ Մեկեան, Վիւրեղ վարդապետի դէմ գրած ձեռն արտաստաւոր մենք որոշել էինք առանձին տպագրել եւ արդէն յանձնել էինք տպարանին, երբ ստացանք ձեռն նամակ յունիսի 10-ից: Կարգացրէք այդ նամակը եւ զամբիւղը գցեցինք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻԳ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ա մ ե ո Ր, բ ա ջ ի կ ի ռ ա կ ի ո Ր ե Ր ի ծ:
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ր:
Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբուժութեան, վերականգն (սփիւրի) եւ միզաեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովանցի—9—10 ժ. ալքի, յերբիւն եւ նեարդալիս.
Կ. Բ. Գգիլիւի—12—1 ժ. ականջի, քթի եւ կրկնի.
Զ. Բ. Բարաւանցեան—11—12 ժ. կանանց եւ երեխայից հիւանդ.
Ա. Կ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին եւ երեխայից.
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը:
Ն. Ն. Ռոստամբեկով—6—7 ժ. վերաբուժութեան եւ մարմնի.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին եւ երե-

խայից հ. ծաղիկ եւ կորու: Նոյնպէս եւ կիրակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.
Կար 50 կ. չքաւորներ ձրի համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին.
Օ. Տ. Սալախալի—տանը, ծաղկահատ եւ բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերատեսուչ:
Բժոկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Մ. Մ Ո Ւ Ր Տ Ա Գ

Ամառը մնալով թիֆլիսում, տալիս է անգլիական լեզուի դասեր, ամառվայ ընթացքում աւելի է ժամ. երաշխաւորում է արտասանութեան կանոնաւորութիւնը: Նշանաւոր զիջումն է այն դէպքում, երբ մի քանի աշակերտներ միասին կը պարապեն իր բնակարանում: Տեսնել ժամը 4-ին: Մարտտօլսկայա:

1—3

Ձ Գ Ո ւ շ ա ջ Է ք Կ ե ղ ծ ու մ ն Ե Ր Ի Յ
ԱՌՈՂՁԱՊԱՆԱԿԱՆ
ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. Ի Ի Բ Գ Է Ն Ս
Ոչնչացնում է պեպիսները, սեւութիւնը, դեղին բծերը, պոչիկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Որոշուող է արվում ձեռք բերել, որպէս տուալետային անուշադուստր, բարձր արժանաւորութեան:

ՈՍԿԷ ՄԷԼԻՍԼ 1893 թ.ի համար:
Կտորի գինը 50 կ. 1/2 կտորի 30 կ.:
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագաղաններում եւ դեղատներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնի մօտ Մօսկվայում: Դէպօ, Թիֆլիսում, Ալգուրովի մօտ, դեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մոսկովի եւ Գրիվալի, պ.պ. Պոպովների եւ Արիստակովի մօտ: Մ. 192812 10—24

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԳՐԱԾԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, որ իր առեւտրում ներկայ տարվայ յունիսի 15-ին նշանակված է աճուրդ կառուցանելու համար հատ. 0,375X,25 երկարութեամբ պաղ. սաժ. Բէ-տօնեան կողուղի Վօզնեսենսկայա փողոցի վերայով Կամեիկի անից մինչեւ Նոյն փողոցում արդէն եղածը—1424 բուրլի գումարի:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանները տեսնել Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը ցերեկվայ ժամը 9-ից մինչեւ 3-ը:

2—3

Լ յ յ ա տ ե ս աւ
Բ. ՏԵՐ-ՂԱՋԱՐԵԱՆՏԻ

ՏԵՐԵՍՄ ՊԱՆԿ
Պօէմա

(Ղազարի գիւղական կենսքից)

Ծախվում է Կենտրոնական եւ Գուտաէնբերգ գրաւաճառանոցներում եւ հեղինակի մօտ, Երեւանի գրադրոցում:

3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ Մեծ արկղիկը 5 բուրլի, փոքրը—3 բ. եւ 1 բ. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժողովրդը բուժանելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը, Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

Ձ Ո Ւ Ր Վ Ա Ք Ը
Երեւանի քնքուրթիւն եւ ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուկները, ապիտակութիւնը քնքուրթիւն եւ ապիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուրլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆումերական եւ դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոցի մ. 15, ընկաւրան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոցի Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատուով:

24—100

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժողովրդը բուժանելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը, Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

Լ յ յ ա տ ե ս աւ
ԱԼԷԿՍԱՆԴՐ ԱՂԱՐԱԲԵԱՆԻ
ՀԱՆԱԲԱՐՅՈՑ ՄՏԱՌՈՐ ԿԵԱՆԲԸ
Գինն է 20 կօպ.
Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական եւ Գուտաէնբերգ գրաւաճառանոցներում:

3—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են հետեւեալ գրքերը

«Գրպանի առլաս, աշխարհագրի մակարդակով», Էփրիկեանի գինն է . . . 1 ռ. 75
«Էփրիկեան», Գրիգոր Արծրունու . . . — » 50
» — » 70
» — » 30
«Թիւրքաշայոյ տնտեսական գրութիւնը», Գրիգոր Արծրունու . . . — » 60
«Պատրիկեանի նամակները», Ա. Գալանթարի . . . — » 30
«Կեանքի գծեր», — » 30
«Բանաստեղծութիւններ», Դ. Աղայեանի . . . 1 » 50
«Արուիւն եւ Մանուէլ» 1 » 60
«Արամատ», վէպ, Ատրպետի 2 —
«Ջարմանայի որդի», Թարգմ. Ն. Ղուկասեանի . . . — » 10
«Բանաստեղծութիւններ», Պ. Դուրեանի . . . — » 20
«Ջէյթունի ներկան եւ անցեալը» 1 » 50
«Բնութիւն Հայկական», 2 » 50
«Բանաստեղծութիւններ եւ արձակ գրութեան» Ռ. Պատկանեանի . . . 3 —
«Աղատութեան մօտին», Թարգմ. Ա. Կ. . . 1 » 20
«Ապրիլ եւ Թոնիկ», Սրիսեան Հայրիկի . . . — » 60
«Հայոց պատմութիւն» (պատկերազարդ) Յ. Ճաղարէգեանի . . . — » 40
«Բառ», վէպ, Շիրվանշահի 1 » 50
«Ուկրաինա» — » 50
«Արեւմտեան Միւր», Գ. Բալասանի — » 25
«Բարդաւան. առանձին», Բարդաւանի — » 20
«Բազմալեզու» 1901 թ. բաժանորդագրութիւն. . . 4 —
«Վտակ ժողովածու» 1 —

Դիմել Թիֆլիս. Կнижный магазин „Гуттенберг“ (Лорис-Меликовская улица, № 11), Г. Галустану.

2—2

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՏԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ

ՊԱՆՏԻՈՆԸ ԱՄԱՌԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԲՈՐԺՈՄ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԸ ԹԻՖԼԻՍԻՈՒՄ: Թէ Բօրժօմում եւ Թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ, պատրաստում է դիմադրական եւ կազմակերպչական կօրուստի, գեմալէ մէքնե-րի, րէալական, առեւտրական եւ այլ ուսումնարանների համար: Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնական աւարական եւ կրօն, ուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուրքական, ալգերա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (առաջ եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն:

Նոյն տեղը ընդունվում են ԱՇԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ: Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ:
Հասցէն. ԲՈՐՅՈՄԻ, Գրոտովսկայա լ. ՍԱՆՏԻՈՆԻ ԹԵՐԻ-ԱԿՈՎԱ, ԹԻՖԼԻՍ, Գանովսկայա լ. № 11.

4—10

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
М. 9,730
ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. RAQUET ET C-іө

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՆԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՅՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.

Եւ հալաւալը՝ Բաթումից Մարսել, մասնով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 20 յունիսի (3 յուլիսի) չորեքշաբթի Միլիթիւրի, նաւապետ ԲՈՒԼԷ, եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օովորակ անից պակաս գներով:

Ամբողջ մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպեդէի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Թաղաքների եւ ձանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ տալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՅՈՒՄԻՈՒՄ—պ. Վրկտոր դ'Արսոն, Նաբէլէ-Տայալ: ԹԻՖԼԻՍԻՈՒՄ—պ. Օ. Բարեկանեանի, Սիմի փող. Խօջափարովսովի եւ Մայսուրաձէի ջարդանապարհ ԲԱՅՈՒՄԻՈՒՄ, Վ. եւ Բ. Մուստաֆաներին, Նաբէլէ-Տայալ փողոց, տուն Կրասնիկեանի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍԻՅԱՅ—Վաղդիսլավադի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. շ.) 15—20

Կ Օ Ո Ֆ Ե Կ Ի Տ Ի Ե Լ Ղ Օ Կ Օ Ղ Վ Կ Ի Գ Ո Ր Ժ Վ Ր Վ Ա

Փ. Ն. ՓՐԻԳՈՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մասշտիբ գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (с начинкой) մարմէլադ (пастила), զէֆիր (зефир), դրաժէ (драже), փրվա-շաքար (պաղ-շաքար, леденец), Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ:

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:
Պրէյն-կուրսանոր ուղարկվում է ցանկացողներին ձրի:
Պատուէրների համար դիմել՝ Թիֆլիս, Նախովա, Պավովսկայա լուս, ԵՍՏԵՆՆԻԻ ԴՈՋԻ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագաղաններում—Գ. Բայեանց ու Ս. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սաւելիսեանի, Զ. Պ. Պօպովի, Ե. Զ. Ս. Բ. Մ. Արքա համօլսի, Հալի-Ռախմանովի պարկական մագաղանում, Պ ե տ ր օ ի խալական մագաղանում եւ այլն: Տեղեֆոն № 362:

36—100